

ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՃԱՌՅԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

(հնչյունաբանություն)

Ա. Ե. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հրաշյա Աճառյանը հայ բարբառագիտության ամենամեծ երախտավորն է: Հայ իրականության մեջ ըստ էության միայն նրան էր վիճակված ստեղծելու իր դպրոցը: Նրա «Հայ բարբառագիտություն. ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» (Մոսկվա—Նոր Նախիջևան 1911) աշխատությամբ հայ բարբառագիտությունը վերջնականապես առանձնացվեց որպես ինքնուրույն գիտակարգ և մտավ ուսումնական ծրագրերի մեջ: Այս աշխատությունն էլ կողմնորոշեց հայ բարբառագիտության հետագա ուղին: Նրանում մշակված են բարբառների ուսումնասիրության ծրագիրն ու սկզբունքները, որոնցով հեղինակն առաջնորդվել է Ղարաբաղի, Նոր Նախիջևանի, Նոր Զուղայի, Ագուլիսի, Մարաղայի, Պոլսի, Առտիալի, Վանի, Համշենի, Կիլիկիայի (ձեռագիր) բարբառներին նվիրված ծավալուն ուսումնասիրություններում, և որոնք ուղեցույց դարձան ուրիշների կողմից գրված հետագա բազմաթիվ մենագրական աշխատանքների համար: Այս վերջինների տարբերությունը Աճառյանի երկերից հիմնականում տերմինաբանական է:

Եվ քանի որ դեռևս շարունակվում են նույն ոգով լույս տեսնել տարբեր բարբառների ու խոսվածքների նվիրված հետազոտություններ, ապա բարբառաբանության աճառյանական սկզբունքների վերհանումն ու արժեքավորումը արդիական նշանակություն է ստանում ոչ միայն տեսության համար, այլև գործնականորեն:

Աճառյանը բարբառների նկարագրությունը տեղավորում էր երեք հիմնական բաժինների մեջ՝ ձայնախոսություն (հնչյունախոսություն), ձայնաբանություն (հնչյունաբանություն) և ձևախոսություն կամ ձևաբանություն: Այստեղ մենք կդիտարկենք միայն ձայնաբանություն բաժինը, որին հեղինակն առանձնակի կարևորություն էր տալիս: Նախքան քննության կոնկրետ սկզբունքներին անցնելը, հարկավոր է պարզել, թե ինչ ելակետային դրույթներ են ընկած մեծ բարբառագետի ուսումնասիրությունների հիմքում:

1. Ի տարբերություն իր նախորդների (Թոմսոն, Մսերյան), իր բարբառագիտական մենագրություններում Աճառյանը, որպես կանոն, համեմատություններ (ինչպես այլ բարբառներում, այնպես էլ հնդեվրոպական նախալեզվի և այլ լեզուների հետ) չի կատարում: Դա բացատրվում է թե՛ մինչև Աճառյանը եղած բարբառային տվյալների աղքատությամբ, և թե՛ հայ բարբառների ծագման հարցում մեծ հայադետի՝ իր նախորդներից տարբեր ըմբռնմամբ:

2. Թեև այս կարգի աշխատություններում պատմա-համեմատական մեթոդի ամենահիմնական տարրը՝ համեմատությունը, չի օգտագործված, սա-

կայն հեղինակը այս դեպքում ևս սկզբունքորեն չի հրաժարվել իր ղավանած հիմնական ուղղությունից՝ պատմահամեմատաբանությունից: Դա արտահայտվում է նրանում, որ հնդեվրոպաբանության մեջ ընդունված ավանդույթի համաձայն, Աճառյանը ամենամեծ կարևորությունը հատկացնում է հնչյունաբանությանը, որի քննության հիմքում ընկած է երիտքերականների կողմից մշակված հնչյունական օրենքների պաշտպանությունը: Եվ քանի որ հնչյունական օրենքները երևան հանելու համար որպես համեմատության եզր է ընդունվում զրաբարը, ապա հնչյունաբանությունը բաժնում ապահովվում է նաև պատմահամեմատաբանության կարևոր սկզբունքներից մեկը՝ պատմականության սկզբունքը. մի բան, որ չի կարելի հաստատապես ասել ձևաբանությունը բաժնի մասին:

3. Բարբառի ուսումնասիրության համար հեղինակը որպես ելակետ ընդունում է զրաբարը, այսինքն՝ զրաբարից է գնում դեպի բարբառ: Այս նշանակում է, որ քննության նյութ են դառնում բարբառի միայն այն բառերը, որոնք ավանդված են զրաբարից, իսկ բարբառային և փոխառյալ բառերը, որպես կանոն, դուրս են մնում հետազոտությունից:

Սակայն Աճառյանը, ինչպես հատուկ է ամեն մի խոշոր գիտնականի, չի կաշկանդվում այս հիմնական սկզբունքներով: Անհրաժեշտության դեպքում նա կատարում է համեմատություններ, դիտարկում է գավառական ու օտար բառեր և, ինչպես ստորև կտեսնենք, կարևոր եզրահանգումներ անում պատմական ու տեսական բարբառագիտության համար:

Ըր «Հայ բարբառագիտության» մեջ հեղինակը տալիս է հնչյունաբանության հետևյալ ծրագիրը. «Հոս պիտի պարզվին բարբառին բոլոր ձայնական օրենքները, մի առ մի մեջ պիտի բերվին հայերենի (իմա զրաբարի) ձայնավորները, երկբարբառները և բաղաձայնները, և համեմատելով բարբառին ձևերուն հետ՝ պիտի քննվի թե հայերեն բառերը կամ ձայները ինչ ու ինչ ձայնափոխություններ կրած են նույն բարբառին մեջ: Որովհետև ձայնաբանությունը լեզվաբանության ամենեն կարևոր ճյուղն է, ուստի հարկ է որ այս գլուխը մանրամասն ճիշտ ու ընդարձակ ըլլա. հայերենի ձայները պետք է որ քննվեն իրենց ամեն մեկ դիրքով առանձին, այն է բառին սկիզբը, մեջը կամ վերջը, ձայնավորի կամ բաղաձայնի քով և կամ անկախ: Պետք է նույնպես, որ մեջ բերված օրինակները լիակատար ըլլան, որպեսզի օրենքներուն ուժը և բացառություններու թիվը լավ որոշվի» (էջ 25):

Ձևոքի տակ ունենալով զրաբարից բարբառ բառարանը, որ նա կազմում էր նախապես, վերոբերյալ ծրագրի համաձայն, Աճառյանը կատարում էր բառերի խմբավորում՝ յուրաքանչյուր հնչյունի տակ առանձնացնելով այն բոլոր բառերը, որոնք պարունակում են այդ հնչյունը: Հնչյունների քննությունը կատարվում է ձայնավորներ, երկբարբառներ, բաղաձայններ հաջորդականությամբ, այբբենական կարգով: Յուրաքանչյուր հնչյունի համար առանձնացված բառերը իրենց հերթին ենթարկվում են ավելի մանր խմբավորումների:

Առաջին հերթին զրանք բաժանվում են երեք խմբի՝ ըստ այն բանի, թե րննարկվող հնչյունը բառասկզբի, բառամիջի, թե՞ բառավերջի դիրքում է հանդես գալիս: Այնուհետև հեղինակը ինդուկտիվ եղանակով փորձում է կանոն դուրս բերել երեք դիրքերից յուրաքանչյուրի համար: Եթե ստացված

արդյունքները իրար համընկնում են, ապա բոլոր դիրքերի համար տրվում է մի ընդհանուր կանոն. «Հին հայերենի և ձայնավորը վանի բարբառում ամեն դիրքի մեջ էլ մնում է ա. ինչ. բառասկզբում՝ ա կանջ > ա կանջ, ասեղ > ասեղ... բառամիջում՝ սպիտակ > սիվտակ, հպարտ > խպառտ... բառավերջում՝ այս > էսա... դնա > կրնա...»¹:

Իսկ եթե այդպիսի ընդհանուր կանոն հնարավոր չէ դուրս բերել, ապա այդ երեք դիրքերը դիտարկվում են առանձին-առանձին. «Բառասկզբում դրաբար բ՝ Պոլսի բարբառում սովորական կանոնով դառնում է ք. եղած օրինակներն են բակ > բադ... բան > բան, նյութ, իր, բանալ > բանալ...»²: Կանոնից շեղվող մյուս օրինակների քննությունից հետո հեղինակն անցնում է բառավերջի դիրքերին:

Պատահում է, որ բառերի այս կարգի խմբավորումը իրեն չի արդարացնում, քանի որ հնչյունների փոփոխության համար հիշյալ դիրքերը չեն (կամ միայն հիշյալ դիրքերը չեն), որ կարևոր են: Նման դեպքերում Աճառյանը լեզվական նուրբ դիտողականությամբ առանձնացնում է այնպիսի դիրքեր, որոնք առաջնային նշանակություն ունեն և սլաշմանավորում են տվյալ հնչյունական օրենքը:

Ձայնավորների և երկբարբառների քննության ժամանակ հաճախ առաջին սլաշն է մղվում վանկաքանակությունը. «Միավանկ բառերի մեջ հին հայերենի և ձայնը դառնում է օ. այս կանոնի տակ ընկնող բառերը հետևյալներն են՝ ալ > օլ... արջ > օռջ... կաթ > կօթ...»³: Միավանկ բառերը ստանդարտից հետո անցում է կատարվում երկվանկ և բազմավանկ (երեք և ավելի վանկ ունեցող) բառերին:

Ն, հաճախ նաև ո ձայնավորների, այլ երկբարբառի համար, որպես կանոն, վանկաքանակության հետ հաշվի են առնվում բառասկզբի և մյուս դիրքերը. «Այլ երկբարբառը բառասկզբում միավանկ բառերի մեջ դառնում է ա ինչ. ալդ > ադ. ալլ > ալ... բազմավանկ բառերի սկզբում դառնում է է ինչ. ալրիգ > էրիգ, ալրել > էրել...» (Պոլիս, էջ 26):

Առանձին դեպքերում մեծ նշանակություն է ստանում շեշտը. «...և ձայնավորը Ագուլիսի բարբառում եթե շեշտյալ է և բառի վերջին վանկն է կազմում, դառնում է օ... եթե վերջին վանկը չէ՝ մնում է ա կամ դառնում է ռ. եթե շեշտից առաջ է՝ սղվում է կամ իսպառ ջնջվում, իսկ եթե շեշտից հետո է (վերջավանկում)՝ մնում է ա» (Ագուլիս, էջ 43):

Ընդհանրապես պետք է նկատել, որ շեշտից կախված հնչյունափոխությունը հեղինակը չի տարբերակում դիրքային և մյուս կարգի հնչյունափոխական դեպքերից, որ նույնպես գալիս է գրաբարը ելակետ ունենալուց: Եթե քննության ժամանակ ելակետ ընդունվեր բարբառի ներկա վիճակը, ապա հազիվ թե Աճառյանի աչքից վրիպեին շեշտի հետ կապված բազմաթիվ հարցեր. օրինակ այն, որ Ղարաբաղի և Ագուլիսի բարբառները, որպես կանոն,

¹ Հ. Աճառյան, Քննություն վանի բարբառի, Երևան, 1952, էջ 16 (այսուհետև՝ վան):

² Հ. Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941, էջ 32 (այսուհետև՝ Պոլիս):

³ Հ. Աճառյան, Քննություն Ագուլիսի բարբառի, Երևան, 1935, էջ 21 (այսուհետև՝ Ագուլիս):

շեշտից դուրս օ հնչյուն չունեն, այլ միայն ու (այսպես է նաև Մեղրու բարբառը)։ Բարբառներում վերջընթեր շեշտի մասին Աճառյանը խոսում է Ազուլիսի (լջ 298—302) և հատկապես Ղարաբաղի բարբառի քննության մեջ (բայց ոչ հնչյունաբանություն բաժնի տակ), որն էլ ըստ էության մնում է որպես վերջին խոսք. «Եթե նկատենք, թե այս փոփոխությունը հատուկ է միմիայն հիշյալ կովկասահայ (իմա՝ Ղարաբաղի, Ազուլիսի, Թիֆլիսի) բարբառներուն և գոյություն չունի ուրիշ տեղերու հայ բարբառներուն մեջ, եթե նկատենք նաև թե կովկասյան ոչ հնդեվրոպական լեզուները առհասարակ հարաշեշտ են, վերջապես եթե նկատենք թե Ուտեաց, Դոդթան, Արցախու նախկին ոչ հայ և ոչ հնդեվրոպական, այլ կովկասյան ազգատոհմին պատկանող և հետո հայացած ժողովուրդներուն ալ նախնական լեզուն (այժմ կորած աղվաններենը) հարաշեշտ պիտի լիներ, կրնանք հաստատ հետևցնել, թե Ղարաբաղի և Ազուլեցոց սույնպիսի շեշտադրությունը զուտ հետևություն և շարունակությունն է իրենց կորսնցուցած նախկին բնիկ լեզվական շեշտադրության»⁴։ Ղարաբաղի բարբառում շեշտի տեղափոխության հարաբերական ժամանակագրության մասին կարևոր դիտողություն կա նույն ուսումնասիրության 83—84 էջերում։ Նշելով, որ դրաբարի ո հնչյունը բառասկզբում շեշտի տակ դառնում է վրէ (որս > վրէրս, ոսկոռ > վրէսկեռ), իսկ շեշտից առաջ ընկնում է (ողողել > ղղողել, որոտալ > ղրոտալ), եզրակացնում է. «Այս պարագան երևան կհանե երկու ձայնաբանական օրենքներու՝ այն է ձայնավորներու անկման և շեշտի տեղափոխության ծագման համեմատական ժամանակը. այս օրենքները հաստատած պիտի լինին Ղարաբաղի բարբառին մեջ անշուշտ ավելի առաջ քան սկզբնատառ ո-ին և օ-ի ձայնաշրջվիլը. որովհետև հակառակ պարագային, այսինքն երբ այս վերջին ձայնափոխությունը ավելի հին կամ մինչև իսկ ժամանակակից լիներ ձայնավորներու անկման օրենքին, վերի բառերը *վրղողել, *վրղորմիլ, *վրրոտալ ևլն ձևերն ունեցած պիտի ըլլային այժմ»։

Այսուհանդերձ, շեշտի հետ կապված շատ հարցեր կարոտ են լուսաբանության և, ցավոք, դեռևս անհրաժեշտ ուշադրության չեն արժանացել։

Հնչյունների քննության ժամանակ Աճառյանը կարևորագույն դեր է հատկացնում կախյալ և անկախ դիրքերին։ Դատելով բերվող օրինակներից, հեղինակը բաղաձայնների համար, որպես կանոն, անկախ դիրք է համարում ձայնավորային շրջապատը։ Բառասկզբի և մյուս դիրքերի համար բերվող ընդհանուր օրենքները վերաբերում են միայն անկախ դիրքերին։ Անկախ դիրքի օրինակներ ավելի շատ լինում են բառասկզբում, իսկ բառամիջի և առավելապես բառավերջի համար հաճախ անհնար է բավականաչափ օրինակներ գտնել. «Բառավերջի ր անկախ օրինակ չունի բնավ. գտնվում է միայն մ ռնդականից հետո»⁵։

Կախյալ դիրքի դեպքում ամեն անգամ շեշտվում է հնչյունական շրջապատը (կախյալ դիրքով են պայմանավորված բոլոր կարգի փոխազդեցական հնչյունափոխությունները)։ Այստեղ առաջանում են ավելի մանր խմբավորումներ, որոնցից յուրաքանչյուրի համար առանձին կանոն է դուրս բերվում։ Այսպես, ր բաղաձայնի համար տարբեր բարբառներում ր-ն դիտարկվում են

⁴ Հ. Աճառյան, Ուսումնասիրություններ հայկական բառախոսության։ Քննություն Ղարաբաղի բարբառին, Վաղարշապատ, 1899, էջ 186։

⁵ Հ. Աճառյան, Քննություն Առտիայի բարբառի, Երևան, 1953, էջ 59։

մ, դ, ր, ք (բոբիկ), ս, խ, ֆ, շ, ժ, իսկ և ձայնավորի համար՝ դ, ո, ր, կ, պ, ք, փ, ա, վ բաղաձայններին նախորդելու կամ հաջորդելու դեպքերը, որոնք հիմք են տալիս բազմաթիվ մասնակի օրենքների վերհանման համար: Դիտարկենք ա ձայնավորի համար հեղինակի կողմից նկատված մի քանի հետաքրքրական կետեր:

1. «Մ և ն ռնգականներից առաջ՝ միավանկ բառերի ա ձայնը դառնում է ու... թան > թուն, թանկ > թունգյ...» (Ագուլիս, էջ 24): Այս կանոնից այն տպավորությունն է ստացվում, թե ա > ու փոփոխությունը միանգամից է կատարվել: Ս. Սարգսյանը, որ Աճառյանից առաջ քննել է Ագուլիսի բարբառը, ռնգայինների մասին այս օրենքը չի գտնում, բայց նշում է, որ ա > ու հնչյունափոխությունը անցել է ա > օ > ու ուղիով: Բր այդ եզրակացությունը հաստատելու համար նա վկայում է Շրյոդերին, որն ունի ջօն ձևը (ժամանակակից ջոն-ի փոխարեն) և Յոնայի ենթաբարբառի տվյալները (վօնք, ժօմ և այլն), որոնք ներկայացնում են «Ագուլիսի հին լեզվի հետքերը»⁶:

2. «Ղ ձայնից առաջ ա մնում է... աղ > աղ, դաղձ > դաղձ... ըստ այսմ կախձ «կաթն» բառը, որ ըստ իս ծագում է հնագույն հյ. կաղթն ձևից, իրավամբ պահում է իր ա ձայնավորը և չի դարձնում օ:

Այս բառը դարձել է էխտ, նույն երևույթը նկատելի է նաև Ղարաբաղի բարբառում, որ աղտ դարձել է յէխտ: Արևելյան բարբառների մեջ աղտ բառը սովորաբար ջնջվելով՝ փոխանակված է կեղա բառով. աղտ հատուկ է արևմուտյան բարբառներին: Ագուլիսի և Ղարաբաղի բարբառները ներկայացնում են այս դեպքում միջին դիրք» (Ագուլիս, էջ 23): Վերջին դատողությունները ցույց են տալիս, որ Աճառյանը առանձին դեպքերում վերականգնում է հնա... գույն, չավանդված ձևեր, այլև կատարում է համեմատություններ: Մի շարք բարբառներում եղբայր բառի դեմ առկա ախպար, ախպեր ձևերը նա համարում է հին գավառական ձևեր: Իսկ «Հայոց լեզվի պատմության» երկրորդ հատորում (Երևան, 1951) ր և ղ բաղաձայններից առաջ և և ա հենարաններով ձևերի մասին գրում է. «Կարելի է ընդունել, թե այս երկուսը բարբառային ձևեր էին» (էջ 414): Ապա բերվում են բոլոր օրինակները՝ աղավնի-եղունիկ, երազ-արազ և այլն: Թվում է, այստեղ պետք է դնել նաև աղտ-եղտ ձևերը. Ուրպես կանոն, էժան, իժան ձևերը բխեցվում են արժան-ից, որ պարսկական փոխառություն է. «Արժան բառը՝ նախապես այժան ձև ստանալուց հետո դարձել է էժան, բայց արժել մնում է աժել»⁷: Պետք է կարծել, որ այս դեպքում ևս նախապես գոյություն է ունեցել արժան-երժան զուգաձևը, որ ձևեր է բերել իմաստային տարբերակվածություն: Այդ վկայում է նաև քրդերեն ergan «էժան» ձևը:

Ա և Ե նախահավելվածով զուգաձևերի ընդունումը օգնում է մի շարք ուրիշ բառերի ստուգաբանությանը⁸:

⁶ Ս. Սարգսյան, Ագուլեցոց բարբառը, հատ. 1, Մոսկվա, 1883, էջ 30—31:

⁷ Հ. Աճառյան, Քննություն նոր-նախիջևանի բարբառի, Երևան, 1925, էջ 29:

⁸ Այդ ձևով պետք է մեկնել եղտիւր «ճահճ» բառը. որին զուգահեռ կա աղտիւր ձևը (Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, Երևան, 1971, էջ 24), և այսպիսով համոզիչ կդառնա այդ բառի ստուգաբանությունը աղտ արմատից: Թերևս նույն ձևով պետք է բացատրել նաև եղծ-ը որպես աղծ-ի զուգաձև, թեև դրանք իմաստով տարբերակված են: Ինչպես աղծ-ը հա-

3. Լայն առումով կախյալ դիրքի արտահայտություն պետք է դիտել նաև ձայնավորների ներդաշնակության օրենքը, որ հայերեն բարբառների մեջ առաջինը նկատել է Ս. Մարգսյանը Աղուլիսի բարբառին նվիրված իր աշխատության մեջ: Նույն Աղուլիսի բարբառի քննության մեջ (էջ 152—165) Աճառյանը հանգամանորեն խոսում է այդ երևույթի էության, տարատեսակների և հայ բարբառներում նրա գործառնության աստիճանների մասին:

Ձայնավորների ներդաշնակություն կա նաև Մարաղայի բարբառում:

«Ա և ռ ձայնավորների համար ավելի նկատելի երևույթ է նրանց համաձայնությունը բառի մեջ գտնված մյուս ձայնավորների հետ... երբ բառի մեջ գտնվում են ը, ըի, ըէ, օ, ու, ուի, ուէ ձայները, նրանց դեմ գտնում ենք ա և ոչ ռ, իսկ երբ գտնվում են ի, իւ կամ լօ ձայնավորները, նրանց դեմ գտնում ենք ռ և ոչ ա»⁹:

Ձայնավորների ներդաշնակության օրենքը, որ այս կամ այն չափով գործում է մի շարք այլ բարբառներում (Մարաշի, Զեյթունի, Սվեդիայի, Մեղրու, Ղարաբաղի, Շամախու և այլն), հեղինակը նախապես հակված էր համարելու թուրքերենի ազդեցության արդյունք (Մարաղա, էջ 14), որ քիչ հավանական է, մանավանդ «որ ձայնավորների անկման օրենքը ավելի ուշ է, քան ներդաշնակության օրենքը» (Աղուլիս, էջ 161):

4. Ա հնչյունի կարևոր փոփոխություններից մեկն էլ քմայնացումն է մի շարք բարբառներում, որը նույնպես որոշ իմաստով կախյալ դիրքի հետևանք է: Այս հնչյունափոխությանը հեղինակն անդրադարձել է մի քանի անգամ՝ տարբեր բարբառներ ուսումնասիրելիս:

«Այս ձայնափոխությունը շատ սովորական երևույթ է Մարաղայի բարբառում, բայց ինչպես Աղուլիսի և Ղարաբաղի բարբառներում, նույնպես և այստեղ կարելի չեղավ ինձ գտնել որեւէ հաստատուն կանոն՝ որոշելու համար, թե ձայնաբանական ինչ պայմաններում ա դառնում է ռ, ինչ պայմաններում մնում է անփոփոխ: Վսնա բարբառում վ ձայնից հետո ա դառնում է ռ. բայց Մարաղայի բարբառում այդ պայմանը չի հարգվում... Ղարաբաղի բարբառում ռ, լս բաղաձայնները պատճառ են դառնում, որ ա մնա ա. Մարաղայի բարբառում այս պայմանը նույնպես չի հարգվում... Միակ կանոն, որ իբր ստույգ կարելի է տալ այս մասին, այն է, որ վերջավանկի ա ձայնավորը ռնգականից առաջ գտնված ժամանակ չի դառնալ ռ և կմնա միշտ ա...» (Մարաղա, էջ 26—27):

մարվում է աղտ արմատի տարբերակը (հմտ. պարծ-հպարտ, կեղծ-կեղտ), այնպես էլ եղծ-բեղտ-ի տարբերակն է: Արմատական բառարանի 2-րդ հատորում (Երևան, 1973) բերվում է երբակ «համատարած» բառը, «որ ունի միայն Բառ. Երեմ» (էջ 54): Ղարաբաղի բարբառում կա արքան ձեր նույն նշանակությամբ (էս մարթը տեղէն արթակ կլիս ա, «Այս մարդը տեղովը մեկ գիտ է»): Կարելի է ենթադրել արդակ-երդակ նախաձևը, որով բավական պարզություն է մտցվում հարցի մեջ: Այստեղ հարկ է նշել նաև ռոռն-արոն գուրգանք: Թեև մատենագրությամբ ավանդված է միայն ռոռն, բայց մի շարք բարբառներ (Երևանի, Թիֆլիսի, Ղարաբաղի, Աղուլիսի) ցույց են տալիս արոն, որ նույնպես հնագույն բարբառային ձև պիտի համարել. «Բառասկզբի ո անշուշտ հավելված է՝ ր-ի պատճառով, ինչպես ցույց է տալիս գվս. արոն. որի նախաձայնը նույն հավելվածի ավելի սովորական կերպարանքն է» (Արմ. Ե, 590): Այսպես նաև՝ յսդրել-*եղրենլ>եխենլ, երդ-հուրը:

9 Հ. Աճառյան, Քննություն Մարաղայի բարբառի, Երևան, 1926, էջ 27 (այսուհետև՝ Մարաղա):

Բոլոր բարբաոնների համար որոշակի օրինաչափություն հաջողվում է գտնել «Քննություն Վանի բարբաոնի» աշխատության մեջ, որը հեղինակը «հրճվանքով լցված» անվանում է Աճառյանի օրենք: Սա խոսում է Աճառյան-գիտնականի անընդհատ պրպտող մտքի, անլուծելի և մութ կետերը լուծելու հետևողական ձգտման մասին: Հեղինակն իր օրենքը ձևակերպում է այսպես. «Գրաբարի Բ, Գ, Դ, Ա, Ջ բաղաձայնները Վանի բարբաոնում բառասկզբում դառնում են պ. կ. տ. ծ. և նրանց կողքին գտնվող ա դառնում է ռ, իսկ պ, կ, տ, ծ. և մնում են անփոփոխ և նրանց կողքին գտնվող ա ձայնավորն էլ մնում է անփոփոխ»: Կամ այլ կերպ՝ «Վանի բարբաոնում ա ձայնավորը գտնվելով գրաբարի թրթռուն պայթականներից առաջացած խուլի մոտ, դառնում է ռ, իսկ խուլից առաջացած խուլի մոտ մնում է ա» (Վան, էջ 19):

Վանի բարբաոնում հեղինակը հաճախ է դիմում այլ բարբաոնների և լեզուների տվյալներին, որն առավել արժեքավոր է դարձնում աշխատանքը: Համեմատական քննության փայլուն օրինակ է ա հնչյունին նվիրված հատվածը:

Նախ նշվում է, թե հին լեզուներից որոնք ունեն ա և որոնք ոչ, ապա խոսվում է նոր ու հարևան լեզուների մասին: Աշխարհի տարբեր լեզուների փաստերի հաշվառմամբ տրվում են ա քմային ձայնավորի առաջացման երկու ուղիները: Մի դեպքում ա-ն առաջանում է հին երկար և կարճ ձայնավորներ ունեցող լեզուների կարճ ա-ից (օրինակ պարսկերենում), իսկ երկրորդ դեպքում՝ հարևան թեթև բաղաձայնների ազդեցությամբ (օրինակ՝ ալթայան լեզուներում):

Քմային ա ունեցող հայերեն բոլոր բարբաոնները թվարկելուց հետո Աճառյանը փորձում է պարզել, թե այդ ա-ի ծագումը հիշյալ երկու եղանակներից որին է պատկանում: «Շատ կարևոր է ճշտել այս խնդիրը, որովհետև, եթե առաջին ձևին պատկանի, այդ նշանակում է, թե հայերենը ունեցել է հին ժամանակ կարճ ու երկար, երկու տեսակ ա, իսկ եթե երկրորդ ձևին պատկանի, այս ենթադրությունը վերանում է» (Վան, էջ 18):

Եվ մանրամասն քննության առնելով ա պարունակող բոլոր օրինակները, նա դուրս է բերում իր օրենքը, որ ցույց է տալիս, թե ա-ն ծագել է երկրորդ եղանակով, ուրեմն և հին հայերենը կարճ ու երկար ա չի ունեցել:

Այս օրենքով Աճառյանը մի շարք կարևոր նորություններ բերեց հայ բարբաոնագիտության մեջ:

1) Գիտականորեն հերքեց այն կարծիքը, թե ա-ն փոխառություն է թուրքերենից կամ հարևան այլ լեզուներից: «Ձայների փոխառությունը այնքան դժվարին գործ է, որ պահանջում է երկու ժողովուրդների կենակցության և փոխառյալ բառերի որոշ քանակ: Շատ ուշ այդ բառերի հետ վերջապես կատարվում է նաև պակասող ձայնի փոխառությունը: Վանի բարբաոնը թուրքերենից այդքան խոշոր ազդեցություն դեռ չէր կրել հատկապես այն ժամանակ, երբ ըստ մեր ենթադրության տեղի է ունեցել *ä* (ռ) ձայնավորի գոյացումը» (Վան, էջ 22):

2) Բանալի տվեց մի շարք այլ բարբաոններում համանման երևույթների ճիշտ մեկնաբանության համար: «Այս օրենքով պիտի բացատրենք կամ հիմնավորենք Մարաղայի, Խոյի, Սալմաստի, Նաև Ղարաբաղի, Շամախիի բարբաոնների մեջ մի կողմից ռ ձայնավորի գոյացման երևույթը, մյուս կողմից, թրթռուն բաղաձայնների խլանալու երևույթը: Այս օրենքով պիտի բացա-

տրբենք, թե ինչու Ղարաբաղի բարբառում մի կողմից ունենք դու > տու, ձու > ծու, բան > պէն... Իսկ մյուս կողմից՝ տուն > տոն, տուր > տո... այսինքն մի կողմից ու > ու, մյուս կողմից ու > օ, քրովհետեւ առաջին դեպքում Ղրբ. խուլ ա-ն առաջացած է եղել նախորդ թրթռուն բաղաձայնից, իսկ երկրորդ դեպքում Ղրբ. խուլ ա-ն շարունակությունն է նախորդ խուլ ա-ի» (էջ 21): Սրենքր տարածվում է նաև հետագայում նկարագրված այլ բարբառների ու խոսվածքների (Կարճեանի, Ղարաբաղի, Կոզենի, Շաղախի, Շատախի և այլն) օ, ն (< ու), օ, ու հնչյունների վրա:

3) Մատնանշելով այդ հնչյունափոխության անցման շրջանը, մեծապես նպաստեց պատմական բարբառագիտության համար կարևորություն ունեցող մի շարք երևույթների ժամանակագրությունը:

«Բայց վանեցին որտեղից իմացավ, որ իր խուլ ձայներից այսինչը առաջանում է թրթռունից, մյուսը խուլից: Ուրեմն ու-ի և ա-ի ձայնափոխությունը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ թրթռուն բաղաձայնները գոյություն ունեին դեռ և խուլի վերածված չէին: Ըստ այսմ ունենք երեք ժամանակագրական շրջան»՝ բա, զա... > բա, զա... > պա, կա...:

Մեծ հայագետի այս տեսակետը հաստատվում է նաև այլ բարբառների ու խոսվածքների (Մեղրիի, Ղարաբաղի, Կոզենի, Կարճեանի և այլն) տվյալներով, որ ձայնեղները չեն խլացել, բայց նրանց հաջորդող ա-ն դարձել է ա կամ լ (վերջինս անցել է ա > ա > է ուղիով):

Իր «Ինչպես հասկանալ Աճառյանի օրենքը» հոդվածի մեջ, ելնելով Աճառյանից հետո նկարագրված մի շարք բարբառների ու խոսվածքների տվյալներից, Հ. Մուրադյանը որոշ ձգձգությամբ է մտցնում Աճառյանի օրենքի ձևակերպման մեջ, որով ա) ավելի են ընդլայնվում օրենքի գործառության սահմանները, բ) պարզվում է, «որ ձայնեղների մոտ ա-ի քմայնացման և մյուս կողմից ձայնեղների խլացման երևույթները իրարից անկախ կատարված փոփոխություններ են և պայմանավորված չեն մեկը մյուսով», գ) հավանական է համարվում այն կարծիքը, թե ժամանակագրական առումով ձայնավորների քմայնացումը նախորդել է բաղաձայնների քմայնացմանը: «Եվ քանի որ որպես ընդհանրական օրինաչափություն՝ վերը նշված բարբառներում ա > ա > է անցումը տեղի է ունեցել հին ձայնեղ պայթականների և պայթաչականների մոտ, ուստի պետք է ենթադրել, որ այն պայմանավորված է եղել այդ ձայնեղների երբեմնի ունեցած հնչարտաբերական մի այնպիսի առանձնահատկությամբ, որով քմայնացման երանգ է հաղորդվել ոչ միայն ա ձայնավորին, այլև առհասարակ ետին շարքի ձայնավորներին»¹⁰:

Քանի որ ա-ի առաջացումը հայերենում տեղի է ունեցել երկրորդ եղանակով, ապա հիմք կա ենթադրելու, որ հայերենի որոշ տարածքներում որոշակի ժամանակաշրջանում ձայնեղ պայթականները ունեցել են մի այլ տարբերակիչ հատկանիշ ևս՝ փափկություն կամ, ինչպես Աճառյանն է ասում ալթայան լեզուների համար, ձայնեղները թեթև բաղաձայններ էին, իսկ խուլերը՝ ծանր: Որ հայերենի բաղաձայնները ունեցել են փափկություն-կոշտություն տարբերակիչ հատկանիշ, կարելի է հիմնավորել հետևյալ կետերով:

¹⁰ Հ. Մուրադյան, Ինչպես հասկանալ Աճառյանի օրենքը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, № 2, էջ 164:

1) Հայտնի է, որ հին հայերենի լ և ղ (ինչպես և ր և ո) բաղաձայնների հնչյովաբանորեն էական միակ տարբերակիչ հատկանիշը փափկություն-կոշտությունն էր. հետագայում է, որ ղ-ն դարձավ կոկորդային: Ուրեմն, երեւոյթը խորթ չէ հայերենին: Հատկանշական է, որ քմային ա, օ, ու մնացող բարբառներում, որպես կանոն, ա > օ, ա > է, ո > օ, ու > ու փոփոխություններ ունենք ր և լ բաղաձայնների մոտ, բայց ոչ երբեք ո, դ-ի մոտ: Համատ. մի կողմից՝ լանջ > լէնջ, լաց > լէց, լափել > լէփիլ, լու > լու, լուօ > լուօ, արբեւալ > օւրբիլ. արդար > օւրդօւր, արիւն > օւրուն, արձակ > օւրզակ իսկ մյուս կողմից՝ աղալ > աղիլ, խաղող > խաղուղ, կաշաղակ > օւրէղակ, ոռնիկ > ուռնիկ, խոռվել > խոռվել¹¹:

2) Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Աճառյանի օրենքը չի սահմանափակվել միայն ետին շարքի ձայնավորներով. որոշ տարածքներում այն գործել է առհասարակ բոլոր ձայնավորների համար: Այսպես, Ղարաբաղի բարբառում գրաբարյան ի ձայնավորը ձայնեղներից առաջացած խուլերի մոտ չի ենթարկվում բարբառին հատուկ ի > է, ըէ օրինաչափությանը. համատ. կիր > կրէր. ծիտ > ծրէտ, ծիծ > ծրէծ, հինգ > հէնգ, պինդ > պէնդ, բայց և՛ գիր > կիր, գինձ > կյինձ, դիր > տիր, ձիգ > ծիգ, գիծ > կյիծ, ձի > ծի: Բարբառում է ձայնավորից առաջ քմային կյ ենք գտնում միայն երբ այդ կյ-ն ծագում է ձայնեղ գ-ից. համատ. կես > կէս, կետ > կէտ, «միջատ», բայց՝ գէշ > կյէշ. գետ > կյէտ, այսպես նաև՝ գաղել > կյէնղել, գաղ > կյէղ, բայց՝ կաղ > կաղիգ: Ի և է, ե ձայնավորները այս հատկություններով համահնչյուն են ու, ո, ա ձայնավորներին:

Ավելի չսորաքալով հարցի մեջ, նշենք, որ ձայնեղ պայթականները (ինչպես և լ, ր, վանի բարբառում նաև լ՝ հնչյունները) որոշ տարածքներում թույլատրել են միայն թեթև ձայնավորների ա, ու, օ, ի՛, է, ի) հարևանությունը, իսկ խուլերը՝ միայն ծանրերինը (ա, ու, օ, ր, ըէ, ըի)¹²:

Աճառյանի օրենքը օգնում է մի շարք հնչյունափոխությունների ժամանակը որոշելուն:

Քանի որ, ինչպես նկատում է Աճառյանը, խուլերից հետո գտնվող ու-ն դառնում է օ. իսկ ձայնեղներից հետո գտնվողը՝ ու, ապա կարելի է ենթադրել, որ ու > ու հնչյունափոխությունը (ղու > տու), նախորդել է ու > օ-ին (տուն > տօն), իսկ ու-ն ընդունակ չի եղել փոխարկվել օ-ի: Համաբանությունամբ պետք է ասել, որ ի > ըէ-ն (կիր > կրէր), որ անցել է ի > ըի > ըէ ուղիով, հաջորդել է ի ձայնավորի քմայնացմանը (գիր > կիր). որն այժմ դժվար է նկատել: Առաջի օգտին են խոսում դուռն > տօնը, բույ > պօյ բացառությունները, որոնց մեջ ու-ն չի քմայնացել (հավանաբար ո, կ հնչյունների ազդեցությամբ) և փոխարկվել է օ-ի: Այդ է ապացուցում նաև այն, որ Մեղրու բարբառում ու > օ ընդհանուր օրինաչափությանը (ծուռ > ծօռ, թութ > թօթ, կուշտ > կօշտ) չեն ենթարկվում ու > ու փոփոխությամբ բառերը (բուրդ > բուրդ, գունդ > գունդ): իսկ ջուխտ > Ղրբ. նօխտ, Մեղրի ջօխտ իրանական

11 է. Աղալան. Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 260—290:

12 Հատկանշական է, որ Մեղրու բարբառում կ-ից հետո գրաբարյան է, է, ի ձայնավորները փոխարկվում են միայն ըէ-ով. որ գ-ից հետո չի հանդիպում, համատ. կեղ > կրէղ, կեմ > կրէմ, կիր > կրէր. կէս > կրէս, բայց՝ գէշ > գէշ, գին > գին, գետ > գէտ (Աղալան, Մեղրու բարբառը, էջ 44 և 265): Ի ձայնավորի համար համատ. Ղրբ. ջուր, ջրով-նուր, նիւալ. գիր, գրով-կյիր, կյիրով. բայց՝ նակալ, նակատով > ճակատ, նրկատով. կիր, կրով-կրէր, կրեով:

փոխառնությունը խոստում է այն մասին, որ ու>ու-ն եղել է նախքան այդ բառի փոխառնությունը (հմմտ. ջուր>ճուր, ջուր, ջախ>ճէխ), հետևաբար և թե՛ ու>օ-ն, թե՛ օ>ն-ն հաջորդել են ու>ու-ին:

Այն, որ ու>ու-ն նախորդել է ք>պ-ին, կարելի է հեշտությամբ մեկաբերել նաև Աճառյանի նշած անցման շրջանով՝ բա>բա>պա, ուրեմն և բու>բու>պու (բուլ>բուլ>պուլ), իսկ թե ք>պ և ու>օ փոփոխություններից որն է որին նախորդել, դժվար է ասել: Ինչպես վկայում է Մեղրու բարբառը, ուր տեղի ունի ու>օ, բայց ոչ ք>պ, դրանք իրար հետ կապված չեն: Աճառյանը փորձում է ցույց տալ ու>օ փոփոխության ժամանակը: «Ե՞րբ արդյոք տեղի ունեցավ այս ձայնական երևույթը մեր մեջ: Վերևում հիշված Ղրբ. բօրֆ բառը մի սքանչելի ուղեցույց է մեզ համար: Ղարաբաղում ունենք նաև ռուս բառը, բայց չենք ասում ռօս, ինչպես պահանջում էր ու ձայնավորի օ դառնալու օրենքը: Չենք ասում, որովհետև ու>օ ձայնական օրենքը Ղարաբաղում գործել և վերջացել է ռուսների դալուց առաջ: Սակայն ասում ենք բօրֆ. ուրեմն ու>օ ձայնական օրենքը գործել և վերջացել է թուրքերի արշավանքից հետո (այն է ԺԱ—ԺԲ դարեր)» (Վան, էջ 21—22):

Ուրեմն և ձայնավորների քմայնացումը եղել է XI դարից առաջ: Հ. Մուրադյանը գտնում է, որ «Հայերենի եզրային մի շարք բարբառներում (հատկապես արևելյան) բացառված չէր քմայնացած ն-ի դուլությունը և ժամանակագրորեն այն հարում է պատմական շրջանի սկզբին (V դար), թեև առաջացած կարող էր լինել ավելի վաղ շրջանում»¹³: Իսկ ո>օ-ն և ու>ու-ն ըստ նրա ավելի ուշ ժամանակի արդյունք են:

Հետադաշի հարց է հիշյալ կարգի ենթադրությունների փաստերով հիմնավորումը կամ ժխտումը. սակայն մի բան պարզ է՝ Աճառյանի օրենքը իրեն չի սպառել. հայերենի պատմությունը դեռ էական ապաստիքներ ունի նրանից:

Յուրաքանչյուր հնչյունական օրենքից հետո Աճառյանը, որպես կանոն, բերում է օրենքին ենթարկվող բոլոր օրինակները, «բացի այն պարագաներից, երբ օրենքը ընդհանուր և բացարձակ է: Այսպիսի պարագաներում դրված է «և այլն» բառը... Իսկ երբ մի լեզվաբանական երևույթ կամ օրինակ հատուկ է միայն մի մասնավոր շրջանի, այդ շրջանը հիշված է առանձնապես» (նոր նախիջևան, էջ 9): Բարբառում նոր իմաստ ստացած բառերը բացատրվում են: Առանձին դեպքերում բերվում են նաև դավառական՝ դրաբարից չավանդված բառեր:

Հատուկ ուշադրության են արժանանում ընդհանուր հայերենից շեղվող, այլև հին հայերենի կարևոր հատկանիշները պահպանող ձևերը. «Մեր բարբառներում և և է խառնված են. ղեղեցիկ բացառություն է կազմում Վանի բարբառը, որ զանազանում է այդ երկուսը իրարից...» (Վան, էջ 33):

Վանի բարբառի այս հատկությամբ հեղինակը փորձում է գրչագրական տարբերակներից որոշել ճիշտը:

Ենթաբարբառի համար որպես համեմատության ելր հանդես են գալիս մայր բարբառի ձևերը: Եթե որոշ խոսվածքներ ներկայացնում են ավելի հին վիճակ, հատկապես շեշտվում են: Իրեմն մի ուրիշ բարբառի տվյալները հիմք են դառնում տվյալ բարբառի հնչյունական օրենքի ստուգության հա-

¹³ Հ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 169:

մար: «Պոլսի բարբառի քննութեան մեջ ալ երկբարբառի դրութիւնը լավ որոշված չէր, ներկա օրինակներում դրութիւնը պարզվում է»¹⁴, — կարդում ենք Առտիալի բարբառի քննութեան մեջ:

Առանձին օրենքներ տարածվում են համարյա բոլոր բարբառների վրա: Արձանագրելով Վանի բարբառի ալ> է օրինաշարութիւնը, նկատում է. «Այս օրենքը տարածվում է նաև այն բառերի վրա, որոնք վերջանալով ա ձայնավորով (հին ալ), ստանում են որոշիչ հոգ և (այն>էն): Օր. սատանայ որոշյալ որով սատանայն> Վանի բարբառով սատանա, բայց որոշյալ սատանէն» (Վան, էջ 47): Այս դիտողութիւնը, որ շատ կարևոր է նույն երևոյթը այլուրեք բացատրելու համար, հնարավորութիւն է տալիս եզրակացնելու, որ «ալ> է հնչունափոխութիւնը ավելի հին երևոյթ է, քան բառավերջի բաց վանկի յ-ի անկումը»¹⁵: Մյուս կողմից, այն հիմք է տալիս ենթադրելու, որ ալ-ը բառավերջում (գոնե որոշ տարածքներում և ավելի հին շրջանում) ունեցել է երկբարբառային հնչում, այլապես յօվար է բացատրել բառավերջի ալ> է փոփոխութիւնը և հոգից և Բ հոգնակերտից առաջ. եթե ալ-ը գիտակցվեր որպես երկհնչուն, ապա սպասելի էր ալ>ա (լ բաղաձայնի անկմամբ), ինչպես ունենք գրականում և որոշ բարբառներում: Ասածը հաստատվում է նաև Մեղրու բարբառի տվյալներով, ուր բառավերջում (և մյուս դիրքերում) ունենք ալ>է, փեսայ>փրէսէ, սատանայ>սրտսնէ, կապայ>կապէ, բակայ>բակէ, ալծ>էծ, կալծակ>կէծակ»¹⁶:

Յուրաքանչյուր հնչունական օրենքից հետո Աճառյանը քննում է բացառութիւններն ու մասնավոր պարագաները:

Բացառութիւններն հիմնական պատճառներից են փոխառութիւնները, որոնք լինում են երեք կարգի՝ օտար, գրական-կրօնական և բարբառային:

Աճառյանը, ինչպես վերը նշել ենք, այն կարծիքին է, թե նոր շրջանի, այսինքն թուրքերի տիրապետութիւնից հետո արված օտար փոխառութիւնները բարբառի նկարագրին էական բան չեն ավելացնում, չեն ենթարկվում բարբառի հնչունական օրինաշարութիւններին: Դրանից այն տպավորութիւնն է ստացվում, թե թուրքերի տիրապետութիւնից հետո հայ բարբառները էական փոփոխութիւններ չեն կրել: Օտար փոխառութիւնները հեղինակի համար ամենից առաջ միջոց են հնչունական և այլ երևոյթների ժամանակագրութեան համար: «Թուրքերենից և ռուսերենից փոխառյալ բառերի մեջ ա ձայնավորը ամեն դիրքի մեջ էլ մնում է իր սովորական ձևով... Ընդհակառակը հին պարսկերեն փոխառութիւնները համաձայն են նախորդ օրենքներին... Ձայնափոխութեան այս տարբերութեամբ կարելի է որոշել, թե մի որևէ բառ պարսկերենից է փոխառյալ, թե թուրքերենից և կամ ուրիշ խոսքով հին է, թե նոր: Այսպես իսկ «նիշ» բառը, որ հին մատենագրութեան մեջ էլ գործածական չէ, անշուշտ նոր փոխառութիւն է, որովհետև ըստ օրինի չէ դարձած լույս: Ընդհակառակը դէպք... Իր էօ ձայնափոխութեան պատճառով հին է, ինչ որ հաստատում է նաև Ղրբ. տէլի ձևը իր նախաձայն տով» (Ագուլիս, էջ 27):

Փոխառութիւնների տվյալները Աճառյանը մեծապես օգտագործում է «Հայոց լեզվի պատմութեան» 2-րդ մասում, հայ բարբառների ծագման

¹⁴ Հ. Աճառյան, Քննութիւն Առտիալի բարբառի, էջ 47:

¹⁵ «Անկարկներ միջին դարական հայերենի պատմութեան», հատ. Ա, Երևան, 1972, էջ 93:

¹⁶ Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 59:

ժամանակը որոշելու համար: Հիմնվելով արաբական, պարսկական և թուրքական փոխառությունների վրա, հեղինակը եզրակացնում է, որ ա>օ հնչյունափոխությունը «հետևաբար և զոկերենի ծագումը ընկնում է Թ—ԺԹ դարերում»¹⁷: Ավելի ճիշտ կլիներ կարծել, թե ա>օ փոխառությունը գործել է նաև թուրքերի տիրապետության նախնական շրջանում: Որ այն հին չէ, հաստատվում է նրանով, որ բառն աճելիս ա-ն վերականգնվում է (հմմտ. հարս>հօրս, բայց հարսի, մկրատ>մկրօտ, մկրատի և այլն):

Այսպես ընդունելու դեպքում հեղինակը «շատ տարօրինակ» չէր համարի թուրքերեն չաղ>չօղ, շանա>շունա ձևերը, իսկ բազար>բօզար, թաղա>թօզա, շահի>շօնի, ջան>ջուն, շանղալ>շանղյօլ, դաշման>դաշմուն բառերը չէր դիտի հին պարսկական փոխառություններ: Ինչպես ցույց են տալիս մյուս բարբառները (Ղարաբաղի, Ջուղայի, Մեղրու և այլն), դրանք ուշ շրջանի փոխառություններ են՝ կատարված թուրքերենից կամ նոր պարսկերենից (դրա օգտին են խոսում նաև ա, ու բմայինները, բանի որ նոր պարսկերենն ու թուրքերենը ունեն բմային ձայնավորներ, իսկ հին պարսկերենն ու պահլավերենը չունեն):

Մի շարք դեպքերում բացառությունները գրական լեզվից կատարված փոխառության արդյունք են: Հին շրջանից եկող գրական փոխառություններ են կրոնական բառերը, որոնք իրենց հին ձևը պահպանել են եկեղեցու շնորհիվ: «Բայց այս սկզբունքը մի քիչ խախտում հիմք ունի. կլինեն բառեր, որոնք այսինչ բարբառում գրական համարվելով՝ չեն կորցնում ա ձայնը, իսկ այնինչ բարբառում սովորական դործածություն ստացած լինելով՝ չրկվում են ա-ից: Օրինակ՝ անտառան բառը իհարկե կրոնական փոխառություն է. բայց այս պոլսահայ բարբառում դառնում է ավելի առանց, իսկ Վանի բարբառում այնպես է մերկել, որ դարձել է ավելի առանց: Ընդհակառակը՝ հալաթալ բառը Վանում մնում է ավատալ, իսկ Պոլսում դարձել է ավղալ» (Վան, 28):

Դատելով կողմնակի արված դիտողություններից (նոր նախնական, էջ 36—37, Ազուլիս, էջ 22, Պոլիս, էջ 16—17 ևն) և բերվող օրինակներից, հեղինակը գրական-ուսումնական փոխառություն է համարում այն բառերը, որոնք 1) բարբառների մեծ մասում չեն ենթարկվում այդ բարբառներին հատուկ օրինաչափություններին և իրենց հնչյունական տեսքով հիշեցնում են գրական լեզուները, 2) քիչ են հատուկ առօրյա-խոսակցական ոճին, 3) արտահայտում են նորադույն հասկացություններ, 4) ունեն բարբառային համանիշներ: Այս չափանիշները, ինչպես հեղինակն էլ է նշում, ճշգրիտ չեն. դրա համար միշտ չէ, որ կարելի է համոզված ասել, թե տվյալ բառը գրական փոխառություն է:

Բառերը դիտվում են որպես փոխառություն հարևան բարբառներից, եթե ներկայացնում են հարևան բարբառների համար տիպական ձևեր, որոնք դժվար է այլ կերպ բացատրել:

Աճառյանը նշում է մասնավոր պարագաների պատճառ հանդիսացող հետևյալ դեպքերը՝ քերականական համաբանություն, ամբողջ ձևույթի փոփոխություն, ձևույթի իմաստի պահպանում, հնադույն բարբառային ձև, խաչաձևում, ժողովրդական ստուգաբանություն, փոխառության այլ աղ-

¹⁷ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 377:

բյուր, առնմանություն, տարնմանություն, խուսափում համանունությունից, նոր իմաստի ձեռքբերում, հավելում, անկում, հերթադաշտություն, ձայնդարձ, ամփոփում, դրափոխություն, կրկնություն, սղում:

Առանձին ձևեր հնարավոր է լինում մեկնաբանել միայն անցման օղակները տալով: Այսպես ա >օ-ն աբիւն>օռուկ օրինակում մեկնվում է *երուն անցման ձևով, ուր ու-ի ազդեցությամբ է-ն դարձել է օ: Անցման ձևը, իհարկե, համոզիչ է, քանի որ էրուն ձևը պահպանված է նաև այլուր (Ուրմիա, Ոզմի, Ջեյթուն): Սակայն ոչ մի տեղ ա>է-ն ևս օրինաչափական չէ: Կարելի է ենթադրել այլոյն անցումային ձևը, որ ավանդված է միջին հայերենից (հմմտ. Մարիամ>Մայրամ, սարյակ>սայրակ, տոյուծ>այուծ, որ հաճախ լսելի է ոչ գրագետ անձանց մոտ):

Այսպիսով կունենանք աբիւն>այրոյն>էրուն անցումը:

Երբեմն բարբառը կարող է ներկայացնել փոխատու լեզվի առավել հարազատ ձևը. «Մասնավոր դեպքեր են... ստեպղին>տապղին (որի մեջ ա-ն համաձայն է ձիշտ հուն... ձևին, մինչ գրական ձևը (ստեպղին) շեղվում է և ունի ե)» (Վան, 33): Այս նույն մոտեցմամբ կարելի է գտնել և ուրիշ (նաև ոչ փոխառյալ կամ բնիկ) բառեր, որով և դրանք կդիտվեն ոչ որպես բացառություններ, ինչպես կարծում է հեղինակը (և նրան հետևելով նաև մյուսները), այլ օրինաչափ դեպքեր: Այսպես, Ազուլիսի բարբառի ֆայսակ (Վանում՝ ֆյիսիկ) ձևը անմիջապես բխեցվում է գրաբարյան ֆսակ ձևից, այնինչ այն ներկայացնում է փոխատու լեզվի՝ պարսկերենի ավելի հարազատ, ի ձայնավորով ձևը՝ kīsak: Նույն ձևով տարբեր բարբառներում հանդիպող րունատ, կունգուդ, կուրծիլ-կործիլ, կօրէ-կուրա, պին, շոուքլան-շոի-դան-շոուդան, ինֆնալէդ-ինֆնաֆօդ, ճալգակ և այլ ձևեր պետք է բխեցնել ոչ թե առնէտ, կնգուդ, կրծել, կրիայ-կրայ, բահ, ջրուդան-ջրոդան, այգոդֆ, արձակ ձևերից, ինչպես ընդունված է մեզանում, այլ առնատ<ասոր. արձ'ձ, կունգուդ<հուն. կուկուլիոն, կուրծիլ (արմատն է կուրծ), կուրիայ (արմատն է կուր), շուրիդան պրս. suriđan «կարկաջմամբ հոսիլն ջրոյ, անձրևի և գինոյ»¹⁸, բին > բիր > *bher, այգահոդ, հարգակ պհլ. harzak ձևերից: Այս կարգի թյուրիմացությունները առաջանում են գրաբարյան ձևերը հաստատուն կերպով ելակետ ընդունելուց, քանի որ «Արմատական բառարանում» հիշյալ ձևերը հիմնականում ձիշտ են բացատրված: Զանազան բարբառներում հանդիպող միևնույն կարգի այն ձևերը, որոնք գրաբարի համեմատ բացառություն են, որպես կանոն, ենթադրում են գրաբարից տարբեր այլ աղբյուր:

Այն բոլոր դեպքերում, երբ հնարավոր չի լինում որևէ համոզիչ բացատրություն կամ որոշակի կանոն գտնել, մեծ բարբառագետը բերում է շեղումը ներկայացնող ձևերի լիակատար ցանկը և նշում, որ այն կարոտ է բացատրության: Միաժամանակ, մի շարք արժեքավոր դիտողություններ է անում՝ խոսելով այն մասին, թե այդ ձևերը բացատրելու համար իր ջանքերն ինչ ուղղությամբ են ընթացել և ինչ արդյունք է ստացվել, որով հեշտանում է հետագա ուսումնասիրողների գործը: Մի կողմ թողնելով բազմաթիվ մյուս դեպքերը, քննության առնենք մի օրինակ, որին մեր կարծիքով կարելի է գոհացուցիչ բացատրություն տալ:

¹⁸ Նույն տեղում, 1-ին մաս, Երևան, 1940, էջ 320:

Նոր Զուղայի բարբառում բերելով ականջ-անգոն, գալ-գոլ, տարգալ-գպլ, գանն-գոուն, գարի-գորի օրինակները, գրում է. «Այս ձայնափոխությունն պատճառաբանությունը չեմ կարողացել իմանալ, բայց նկատելի է, որ բոլոր դեպքերի մեջ էլ ձայնափոխությունը տեղի է ունեցել կոկորդականի մոտ» (Նոր Զուղա, էջ 52): Այստեղ պետք է ղենել նաև գալլ-գոլ բացառությունը (այ երկբարբառը նոր Զուղայի բարբառում դառնում է ալ):

Այս նույն բառերի ձևերը արևելյան մի շարք բարբառներում (Ղարաբաղի, Մեղրու, Կաթավաթերդի, Ադուլիսի և այլն) ենթադրել են տալիս *ակոնջ, գոլ, *տարգոլ > տրգոլ > տգոլ > դգոլ, *գորի, գոուն, *գոլլ նախաձեւերը, որոնք, ուստ երևույթին, որպես հնագույն մի բարբառի հետքեր, գոյություն են ունեցել առավել ձևին ուղղահայե: Դու ձևը վկայված է միջին հայերենյան շրջանից: Աճառյանը նույնպես հավանական է համարում գոլ-ի հնությունը որպես գալ-ի լծորդական տարբերակ (Արմ. Ա, էջ 500): Դուլ և գոուն ձևերը հիշատակում է XIII դարի հեղինակ Վարդան Արևելցին՝ «Եւ զյղարկեմ-ն եւ զյղեմ-ն յղոմ և զյոյսն լուս ասեն ոմանք եւ զգայն՝ գոյլ և զգաոն՝ գոուն»¹⁹: Ա ~ ո ձայնդարձի համար (նույնպես կոկորդային գ, կ-ից հետո (հմմտ. գաղ (տ) ~ գող (տ), գաղ (ջ) ~ գոլ, գուն ~ ջան (i), թեքևս նաև գարշ ~ գորշ, գոռ ~ գառ (Ղրբ. գյան), կաղին ~ Ղրբ. տկողին «պնդուկ», գորտ ~ գարտնուկ (Ղրբ. կյէռթնուկ)):

Կարծում ենք, այսքանն էլ բավական է հարցի մասին որոշակի պատկերացում կազմելու համար, թեև, իհարկե, սրանով չեն սպառվում բարբառների քննության՝ Աճառյանի հոդվածը մշակված բոլոր սկզբունքները:

ПРИНЦИПЫ ДИАЛЕКТОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ АЧАРЯНА

(фонетика)

А. Е. ХАЧАТРЯН

(Резюме)

Исходной точкой сравнительного исследования армянской диалектной фонетики Ачарян берет древнеармянский язык — грабар. Для установления фонетических законов он выделяет некоторые случаи в зависимости от того, 1) какое место занимает звук в слове (в начале, середине, конце); 2) каково положение звука относительно ударения (подударное, предударное, послеударное); 3) в каких словах (по количеству слогов) встречается данный звук (в односложных, двусложных, многосложных); 4) каков контекст звука, и т. п.

В результате изучения «закона Ачаряна» (о происхождении палатализованного а) выясняется, что действие этого закона в некоторых диалектах распространяется на все гласные звуки. Это дает нам основание полагать, что в ранний период в ряде диалектов для взрывных согласных был релевантен признак мягкость/твердость. В статье, в частности, делаются замечания о некоторых диалектных явлениях, об относительной хронологии отдельных фонетических изменений, о происхождении некоторых диалектных слов.

¹⁹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Пг., 1915, էջ LX.